


ԽՈՀԱՆ ՇԵՐԲՈՅԻ ԳԱՐԵՆԻ ԺԱՌԱՎ, ԹԱՌԱՅ, Ա. Ե. ԵՐՄԻՍՍ, ԹԻՍ
Քաղաքացիական Կողմարած Ալյուրի Թաժին

ՀՐԱՀԱՆԳ

ԽԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱԶՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ
ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ



Հայոց պետական Հայկական ԽՍՀ ներքին նորմերի
Ժողովրդական Կոմիսարիատ
Շնուգը - 1938 թ.

1 MAR 2010

ՆԱՀԱՄ ՆԵՐԲԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԻՍ.ԽԱՆ ԿԱՄԻՍՅ.ՌԻՍ.Տ.
Քաղաքացիական Կուսուրյան Ակերի Բաժին

347
Խ-11

ՀՐԱՀԱՆԳ

ՀԱՂԱԲԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ
ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հրատարակություն Հայկական ԽՍՀ Ներքին Գործերի
Ժողովրդական Կոմիտարիատի
Եղեգնաձեռնություն - 1938 թ.

11 SEP 2013

34.261

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՄՀ
ԽԱՆՎՐԻ Պարծերի Փողովրդական
Կոմիտարի հեղակալ
Դիմիտրամանաւար ԶԵՐԱԾԵՑԱԼ

ՀՐԱՎԱՆԳ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ
(ՏՈՄԱՐԱԳՐՄԱՆ) ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1-ԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԸ

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցումները են կոչվում՝ պետական որդանների կողմից կատարված՝ ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության (ապահարզանի), վորդեգրության, ազգանուն և անուն փոխելու և հայրությունը վորոշելու դրանցումները (տոմարագրությունները):

2. Քաղաքացիական կացության ակտերի գրանցումը (տոմարագրումը) կատարվում /ե ինչպես պետական ու հասարակական շահերի տեսակետից, այնպես ել քաղաքացիների ամուսնական ու ընտանեկան հարաբերություններից բղխող անձնական և գույքային իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակով:

ԳԼՈՒԽ 2-ՐԴԻ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՂԵԿԱՎԱՐՈՂ ՈՐԳԱՆՆԵՐԸ

3. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման որդանների աշխատանքների ղեկավարությունը ԽՍՀՄ-ում իրականացնում է ԽՍՀՄ ՆԳԺԿ Քաղաքացիական կացության Ակտերի Բաժինը (Ք.Կ.Ա.Բ.):



665
41

4. Քաղաքացիական կացության ակտերը գրանցող որպանների աշխատանքները, միութենական և ինքնավար հանրապետություններում, յերկրներում ու մարզերում զեկավարում և՛ միութենական ու ինքնավար հանրապետությունների ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատների և ՆԳԺԿ համապատասխան յերկրային ու մարզային վարչությունների քաղաքացիական կացության ակտերի բաժինները (ԲԱԱԲ) :

5. Քաղաքներում, ըրջանային կենտրոններում, գյուղական բնակավայրերում և բանվորական ավաններում քաղաքացիական կացության ակտերի գրանցումը զեկավարում և՛ ՆԳԺԿ համապատասխան քաղաքային ու շրջանային բաժիններն ու բաժանմունքները:

ԳԼՈՒԽ Յ-ՐԴ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԸ ԳՐԱՆՑՈՂ ՈՐԳԱՆՆԵՐԸ

6. Քաղաքացիական կացության ակտերը գրանցող որդանները հանդիսանում են՝

ա) Քաղաքներում և շրջանային կենտրոններում— քաղաքացիական կացության ակտերը գրանցող բյուրոները (զագսի բյուրոն) :

բ) Գյուղական վայրերում ու բանվորական ավաններում— գյուղական և ավանային խորհուրդները:

7. Զագսի քաղաքային և շրջանային բյուրոների վրա յէ գրփռում՝

ա) Ծննդյան ակտերի գրանցումը:

բ) Մահվան ակտերի գրանցումը:

գ) Ամուսնության ակտերի գրանցումը:

դ) Ամուսնալուծության ակտերի գրանցումը:

յե) Վորդեգրության ակտերի գրանցումը:

զ) Ազգանուն և անուն փոխելու ակտերի գրանցումը:

ե) Հայրությունը սահմանելու առթիվ յեղած դիմումների ընդունումը:

ը) Կորցված կամ չգրանցված քաղաքացիական կացության ակտերի վերականգնումը:

թ) Քաղաքացիական կացության ակտերում գրանցումների ուղղումներ կատարելը:

ժ) Բազմազավակակ մայրերի դիմումների ընդունելու ու ձեւադրության պետական նպաստ սահմանելու համար:

ժա) Քաղաքի և շրջանի սահմաններում ակտերի գրքերի տրմիթի պահպանումը:

ժբ) Զագսի բյուրոյում գտնվող մետրիկական ու ակտերի գրքերում գրանցվածին հիման վրա քաղաքացիական կացության ակտերի տոմարագրման մասին վկայականներ տալը:

ժկ) Ակտերի յերկրորդ որինակները ամեն ամիս ներկայացնելը— զագսի քաղաքային բյուրոները՝ ՆԳԺԿ քաղաքացիական կացության ակտերի բաժին, զագսի ըրջանային բյուրոները՝ ՆԳԺԿ ըրջանային որպանին— քաղաքացիական կացության ակտերի բաժնի հրահանգչեն:

ժկ) Գյուղական և ավանային խորհուրդների վրա յէ գրվում՝

ա) Ծննդյան ակտերի գրանցումը:

բ) Մահվան ակտերի գրանցումը:

շ) Ամուսնության ակտերի գրանցումը:

դ) Ամուսնալուծության ակտերի գրանցումը:

ե) Վորդեգրության ակտերի գրանցումը:

յե) Հայրությունը ձահաչելու կապակցությամբ յեղած դիմումների ընդունելությունը:

յկ) Գյուղական և ավանային խորհրդի սահմաններում ակտերի գրքերի արխիվի պահպանումը:

յը) Գյուղական և ավանային խորհրդում գտնվող մետրիկական ու ակտերի գրքերում տոմարագրված քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին վկայականներ տալը:

յթ) Ակտերի յերկրորդ որինակները ամեն ամիս ՆԳԺԿ ըրջանային որպանը— քաղաքացիական կացության ակտերի բաժնի հրահանգչեն ներկայացնելը:

յի) Արտասահմանում ապրող խորհրդային քաղաքացիների բաղկացիական կացության ակտերի գրանցումը (տոմարագրումը) կատարելը են կը ՀԱՄ հյուպատոսությունները:

10. Քաղաքացիական կացության ակտերը ժամանակին և ձիւցությունը պատասխանատվությունը (գրանցման կարգի ու ժամկետների մասին բնակչությանը ազգարարելը, գրանցումներից խուսափելու գեղագերի հայտնաբերումը, ակտերի գրքերի ձիւցությունը և այլն) գրվում են:

ա) Քաղաքներում և շրջկենտրոններում՝ անձամբ քաղաքացիան կացության ակտերի գրանցման քաղաքային և շրջանային բյուրոների վարիչների վրա:

բ) Գյուղական վայրերում՝ անձամբ համապատասխան դյուզական և ավանային խորհուրդների քարտուղարների վրա:

ԳԼՈՒԽ ±ՐԴԻ

ԱԿՏԵՐԻ ԳՐՔԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

11. Քաղաքացիական կացության ակտերը (ծնունդ, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն, վորդեգրություն, աղքանուն ու անուն փոխելու և հայրությունը ճանաչելու) գրանցվում են հատկապես այդ նպատակով սահմանված գրքերում ըստ ակտերի յուրաքանչյուր տեսակի:

12. Ակտերի գրքերը բաղկացած են հիմնական տալոններից և կտրոններից (յերկրորդ որինակներից) և պետք է համարակալված, ժամապենված և կողմանակած լինեն ՆԳԺԿ համապատասխան որդանի զմուսի կնիքով:

13. Յուրաքանչյուր ակտ դրանցվում է յերկու որինակից հիմնական տալոնը և կտրոնը:

14. Ակտերի առաջին որինակները մնում են գրքում, իսկ 2-րդ որինակները ամիսը մեկ անգամ պոկվում և վոչ ուշ քանի հաջորդ ամսի յերկուաը ուղարկում են՝

ա. Զագսի քաղաքային բյուրոները՝ ՆԳԺԿ քաղաքացիական կացության ակտերի բաժնին:

բ. Զագսի շրջանային բյուրոները, ավանային և գյուղական խորհուրդները ՆԳԺԿ շրջանային որդանին՝ քաղաքացիական կացության ակտերի բաժնի հրահանչին:

Ծանօթություն. — Բացառություն է կազմում հայրությունը ճանաչելու ակտի յերկրորդ որինակը, վորը հանձնվում է ինդրատուհուն:

15. Ակտերի յերկրորդ որինակներն ուղարկելուց հետո ակտերի գրքերի գրանցումների առաջին որինակում կատարված բոլոր փոփոխությունների մասին (ազգանուն և անունը փոփելու, գրանցումների սխալներն ուղղելու դեպքերում և այլն) զագսի բյուրոյում տարվում է ցուցակ (հավելված № 1), վորը հանձնելու

սանում է հուշատեար, ֆջկ յերկրորդ որինակները ստանալուց հետո, նրանցում համապատասխան ուղղումներ կատարելու համար:

16. Ակտերը գրանցելու ժամանակ բոլոր առաջադրված հարցերին պետք է տալ սպառիչ պատասխան: Զի թույլատրվում տեղը լրացնելու ժամանակ վորեւ սյունյակ առանց գրանցելու թողնել, բացառությամբ սույն հրահանգի 33, 39 և 47 հոդվածներում հիշատակված հատուկ դեպքերի: Ակտերի այն սյունյակները, վիրոնց արվում և բացառական պատասխան լրացվում են «վոչ» բառով:

Ակտերի գրքերի գրանցումը, գրանցողների ու առմարագրողի ստորագրությունները լրացվում են պարզ և ընթեռնելի ու միայն թանաքով: Զի թույլատրվում ակտերի գրքում գրանցում կատարել ու ստորագրել ժամանակով, ստորագրության փոխարեն խաչաձև նշաններ դնել կամ մատը թանաքուտել ու դրոշմել: Զի թույլատրվում նաև խոսքերը կրծատ գրել կամ ջնջումներ կատարել: Յեթե ակտը գրանցելու ժամանակ անհրաժեշտ են առաջին կամ յերկրորդ որինակում լրացում կատարել, այդ դեպքում ակտի բռնկի վրա անպայման դիտողություն է կատարվում, վորը առանձնակի վալերացվում է գրանցում կատարողի ստորագրությամբ և կնիքով (հավելված № 2):

17. Կարենը և, վոր հարցերի պատասխանները ձեվակերպված ինենի պարզ և լրիվ:

ա) Զբաղմունքի, վորոնց մասին դիտողություն է արվում ակտում: Զբաղմունքի տակ պետք է հասկանալ տվյալ անձի մասնագիտությունը, պաշտոնը, արհեստը: Լրացնելով այս հարցի պատասխանը անհրաժեշտ է ճշտորեն ցույց տալ թե ինչ աշխատանք է կատարում տվյալ անձնավորությունը: Այսպես որինակը բանվորների գրանցման ժամանակ գրվում է՝ «սլեսար», «տոկար», «մանածագործ» և այլն, ծառայողներինը՝ «վիճակագիր», «հերթափոխ ծարտարապետ», «հրշեջ պահպանության պետ», «գործարանի դիրեկտոր», «հաշվապահ», «մեքենագործ» և այլն: Կոլտնտեսականների գրանցման ժամանակ նրանց գրանցմունքը ցույց է տրվում «գյուղատնտեսություն»: Կոլտնտեսության մեջ վորոշակի աշխատանք կատարող կոլտնտեսականները գրանցվում են ըստ մասնագիտության: Որինակ՝ «նախարարական», «կթող», «տրակտորիստ», «պահակ», «դաշտավարական բրիգադիր», «կոլտնտեսության նախագահ»: Մենատնտեսների և

նրանց ընտանիքի անդամների զբաղմունքը գրանցվում և «Գյուղատնտեսություն», տնային տնտեսուհիներին «տնային տնտեսուհի»: Արհեստավորներին գրել ըստ արհեստի բնույթի «կոշկակար», «գլխարկ կարող» և այլն:

Ավատ պրոֆեսիայի անձանց գրել «գրող», «նկարիչ», «կոմպոզիտոր», «քանդակագործ» և այլն: Ուսունողին գրել «ուսանող»:

Թուշակառուներին գրել «թուշակառու»:

ԲԳԿԲ ծառայության մեջ գտնվողներին գրել «պինծառայող»:

բ) Աշխատանքի վայրը: Անհրաժեշտ է ցույց տալ այն հիմնարկության, ձեռնարկության, կոլեկտիվ տնտեսության լրիվ անունը, վորտեղ աշխատում և գրանցվողը: Որինակ, Մետաղաձուլմական գործարան «Պրոլետար»: Մասնածագործարան «Հոկտեմբեր» և այլն: Յեթե ձեռնարկությունը պատկանում է կոլխոզին ցույց տալ ձեռնարկության տեսակը և կոլխոզի անունը: Որինակ «կարմիր դարյա» կոլխոզի ազյուտի գործարան և այլն:

Մետանտեսների և կոռպերացման չենթարկված տնայնագործների և նրանց ընտանիքի անդամների համար, աշխատանքի վայրը գրվում են յուր տարեկան մեջ:

Անհատական և այլ թուշակառուների, տնային տնտեսուհիների և նրանց ինամքի տակ գտնվողների աշխատանքի վայրը ոյունյակում դիմ և քաշվում: Զինվորական ծառայողների նկատմամբ զորամասը չի ցույց տրվում, այլ գրվում է միայն զինվորական կոչումը. որինակ «կարմիր բանակային», «կարմիր նավաստի», «լեյտենանանա»:

դ) Ազգություն. գրանցվում է այն ազգությունը, վոր աղքության պատկան և համարում իրեն ինքը գրանցվողը: Այս գեղքում չպետք է ազգությունը շփոթել իրոնի հետ: (Որինակ «թարբեր» փոխարեն ցույց տալ «մահմեդական»):

18. Ակտի յերկրորդ որինակի վերին ձախ անկյանը խփվում է զրանցումը կատարող զագսի որդանի անունը կրող շտամպը, իսկ գյուղխորհուրդներում խփվում է գյուղխորհուրդի շտամպը:

19. Յեթե բլանկը փչացել է, նրա փոխարեն լրացվում է հաջորդը:

Փչացած բլանկը թողնվում է ակտերի գրքերի մեջ, իսկ նրա տուաջին և յերկրորդ որինակների վրա գրվում է «փչացած է»:

20. Ակտը համարակալվում է գրանցման պահին, ըստ այնմ

յուրաքանչյուր տեսակի ակտը (ծնունդ, մահ և այլն) պետք է ունենա իր առանձին գիրքը և համարակալվումը:

Համարակալվումը տարվում է հաջորդական կարգով ամբողջ տարիվ ընթացքում սկսած հունվարի 1-ից մինչև գեկտեմբերի 31-ը:

Ակտի առաջին և յերկրորդ որինակները համարակալվում են միևնույն №-ի տակ: Համարը գրվում է ակտի վերևի մասում:

Յեթե բլանկը փչացել է, այդ գեպքում նրա №-ը նշանակվում է հաջորդ այն բլանկի վրա, գորում գրանցվում է տվյալ ակտը:

21. Ակտի գրանցման ժամանակ դույց և արվում թե վորտարեթիլին, ամսին ու ամսաթիլին և կատարված գրանցումը:

Ակտի առաջին որինակի վրա տարին, • ամիսը, ամսաթիլը նշանակվում է վերին ձախ անկյունում, այդ նազատակի համար տպագրված սյունյակում, իսկ յերկրորդ որինակում, գրանցման ժամանակը ցույց է արվում զագսի բյուրոյի կամ գյուղխորհուրդի շատամպի վրա:

22. Նախքան ակտի գրանցումը սկսելը, զագսի բյուրոյի աշխատակիցը պետք է ստուգի հայտարարողի ինքնությունը հաստատելու հիմնական փաստթուղթը հանդիսանում է անձնագիրը: Այն գյուղական վայրերում, ուր անձնագրային սխտեմ չի մտցված, հայտարարողի ինքնությունը կարող է հաստատվել ծննդյան վեհայան, զինվորական զրքույլի ներկայացնելու միջոցով, կամ վկաների հաստատությամբ: Փաստաթղթերի բացակայության դեպքում թույլ է արվում ակտի գրանցումը, յեթե գրանցվողը անձամբ հայտնի չել գյուղխորհուրդի նախագահին կամ քարտուղարին:

23. Ակտերի գրքում — քաղաքացիական կացության ակտը զրանցելուց, այդ ակտը գրանցողը ընթերցում է այն հայտարարողին, վորը գրանցման հետ ծանոթանալուց հետո ստորագրում է յերկու որինակները և ապա ստորագրում են տվյալ զագսի որդանի պաշտոնակատար անձինք՝

ա) Զագսի քաղաքային բյուրոյում՝ զագսի բյուրոյի վարիչը և գործակարը:

բ) Զագսի շրջանային բյուրոյում՝ գործադար-արխիվաբուժը:

գ) Ավանային և գյուղական խորհուրդներում՝ խորհրդի քարտուղարը:

24. Յեթե գրանցվողները անդրագետ են, նրանց խնդրանուք և նրանց փոխարեն ակտի յերկու որինակների վրա ստորագրում են յերկու գրագետ վկաներ:

25. Անձնագրային սիստեմ չմտցված վայրերում ամուսնության և ամուսնալուծության գրանցման պահին, պահանջվում է ներկայացնել ծննդյան վկայական:

26. Զագսի քաղաքային և շրջանային բյուրոներում, ավանային և գյուղական խորհուրդներում տարվում են այրութենական գրքեր, վորոնցում գրանցվում ե բոլոր գրանցված տնօւնեց աղդանուն, անուն, հայրանունները և ակտերի №№-ը:

ա) 50.000 վոչ պակաս բնակչություն ունեցող խոչոր կենտրոններում յուրաքանչյուր տեսակի ակտի համար տարվում և առանձին այրութենական գիրք:

բ) Մնացած քաղաքներում և գյուղակություններում բոլոր տեսակի ակտերի, համար տարվում ե բնակչանուր այլուրինական գիրք:

ԴԼՈՒԽ 5-ՐԴ

ԾՆՆԴՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

27. Ծննդյան գրանցումը պարագիր և և կատարվում է ծնողների կամ նրանցից մեկի հայտարարությամբ, իսկ ծնողների հիվանդության կամ մահվան դեպքում, կամ նրանց համար այլ պատճառով դիմում տալի անհնար լինելու դեպքում բարեկամների կամ այլ անձանց հայտարարությամբ, վորոնց խնամակալության տակ գտնվում ե յերեխան:

28. Յերեխայի ծնունդի գրանցման մասին հայտարարությունը պետք է տրվի գրավոր կամ բանավոր, ծննդյան որից վոչ ուշ մի ամսվա ընթացքում:

29. Մեռած ծնվածների գրանցումը պետք է կատարվի ծննդյան մոմենտից վոչ ուշ 24 ժամվա ընթացքում: Ընկեցիկ յերեխան պետք է գրանցվի նրան գտնող անձնավորության կամ հիմնիցի որդանի հայտարարությամբ, դունելուց 3 որից վոչ ուշ:

30. Սահմանված ժամկետից ուշ տրված հայտարարությունները ծնունդը գրանցելու մասին յենթակա յեն գրանցման ընդհանուր հարգով: Գրանցման համար սահմանված ժամկետից հար-

10 գելի պատճառով ուշացնողների գրանցումը կատարվում են սովորական կարգով, բայց ծննդյան ակտի 16-րդ սյունյակում (Հատուկ նշումներ) ցույց է տրվում, վոր գրանցումը այսքան որով կամ ամսով ուշ և կատարված այսինչ պատճառներով: Հարգելի պատճառներ չլինելու դեպքում, ծննդյան գրանցումը նույնական կատարվում է ընդհանուր կարգով, իսկ գրանցման մասին դիմում տալու ժամկետը խախտելու առթիվ կազմվում է արձանագրություն (Հավելված № 3) և ուղարկվում և շրջործվում կամ քաղխորհուրդ—գյուղական կամ ավանային խորհուրդ—Խամկետը խախտող անձնավորությանը տուգանելու համար (Համաձայն ԽՍՀՄ Կենտողործկոմի և Ժողկոմխորհ 1936 թվի հունիսի 27-ի № 68/1359 վորոշման):

Արձանագրություն կազմելու մասին 16-րդ սյունյակում արվում է դիտողություն:

Ծանոթություն 1.— Հարգելի պատճառներ կարող են համարվել՝

ա) Ծնողների կամ բարեկամների հիվանդությունը, վորն զրկում է նրանց տնից հեռանալու հնարավորությունից.

բ) Ծնողների կամ բարեկամների մահը և տարեկային աղետը, վորը կտրել է հաղորդակցությունը ծնողների բնակության վայրի և զագսի որդանի գոտնված վայրի միջև:

Ծանոթություն 2.— Յեթե գրանցման ժամկետը խախտվել է վոչ ավելի քան մի տարի, ապա գրանցումը կատարվում է ծննդյան գրքում: Յեթե ժամկետի խախտումը մի տարուց ավելի յեւ, ապա գրանցումը կատարվում է վերականգնման գրքում:

31. Այս յերեխանները, վորոնց ծնողները տոմարագրված ամուսնության մեջ չեն, գրանցվում են տոմարագրված ամուսնությունից ծնված յերեխանների համահավասար հիմունքներով:

32. Յերեխայի ծնունդը գրանցելու պահին պետք է ներկայացվեն հետեւյալ փաստաթղթերը՝

ա) Բժշկի կամ ծննդարերության ոգնության հիմնարկի վկանակությունը:

բ) Ծննդարերությունը բնակարանում տեղի ունեցած լին-

լու գեղքում տնային վարչության տեղեկանքը կամ մի վկայի ցուցմունք:

գ) Ծնողների ինքնությունը հաստատող փաստաթղթերը:

Մանրություն.— Հոր փաստաթուղթը ներկայացնելը անհնար լինելու դեպքում (արձակուրդի, գործուղման մեջ գտնվելու և այլն) ներկայացվում է տնային կառավարչության տեղեկանքը. Հոր բացակայության մասին: Այնուազդ, վորտեղ չկա տնային կառավարչություն, հոր բացակայության փաստը հաստատում է մի վկա:

33. Յեթե ծնունդը գրանցելու մասին հայտարարությունը տալիս է մայրը և նա չի կարող կամ չի ցանկանում տալ հոր մասին պահանջվող տեղեկությունները, այդ յերեխային գրանցում են մոր ազգանունով, իսկ հայրանունը տրվում է վորեւ անունը մոր ցանկության: Նման գեղքերում ակտի «տեղեկությունները հոր մասին» 7-15 սյունյակները չի լրացվում:

34. Յեթե յերեխայի գրանցման մասին հայտարարությունը տրվում է վոչ թե ծնողների, այլ ծննդաբերության ոժանգակող համարկության կամ բարեկամների կողմից, նրանք պար ուսկոր են ներկայացնել գրանցման համար տնհաժեշտ տեղեկություններ և ծնողների կամ նրանցից մեկի փաստաթղթերը:

35. Յերեխայի ծնունդը գրանցելու ժամանակ նաև անունը գրվում է այն, ինչ վոր ծնողները կամ նրանց փոխարինող անձինք են ցանկանում:

36. Յերեխան գրվում է ծնողների ազգանունով: Իսկ յեթե ծնողները տարբեր ազգանուններ են կրում, այդ գեղքում ծնողների համաձայնությամբ յերեխային տրվում է նրանցից մեկն ու մեկի՝ հոր կամ մոր ազգանունը: Այն գեղքում, յեր ծնողները համաձայնության չեն պալիս, յերեխայի ազգանունը վորոշվում է ինամակալության որդանի կողմից: Մինչև ինամակալության որդաններում այս հարցի վորոշումը, յերեխայի ազգանունը չի գրանցվում և ակտի առաջին սյունյակը (յերեխայի ազգանունը) մնում է առանց լրացնելու:

37. Յերեկոյակների (զույգ ծնվածների) ծնունդը գրանցելիս ակտերի գրում յուրաքանչյուր յերեխայի համար լրացվում է ծնունդի մասին առանձին ակտ:

38. Բնկեցիկ (գտնված) յերեխայի ծննդի գրանցման ժամանակ, գրանցվող յերեխան գտնելու մասին պետք է ներկայացվի միլիցիայի կամ դյուդիսորդի արձանագրությունը: Բնկեցիկ

(գտնված) յերեխայի աղդանուն, անուն, հայրանուն տալիս է հիմնարկությունը, հայտարարություն տվյալը կամ ծննդյան ակտը գրանցող պաշտոնատար անձը:

39. Բնկեցիկ (գտնված) յերեխայի ծնունդը գրանցելիս, ծնողների մասին տեղեկությունների սյունյակը չի լրացվում, իսկ 16-րդ սյունյակում (առանձին նշումներ) ցույց է տրվում այն մարդու ազգանունն ու անունը, կամ հիմնարկության անունը ու հասցեն, վորոնց դաստիարակությանն և հանճնվում յերեխան:

40. Մեռած ծնված յերեխանների գրանցելը նույնպես պարտադիր է, վորը տոմարագրվում է ծննդյան ակտերի գրքի հատուկ սյունյակում:

Մանրություն.— Գրանցման յենթակա յեն վեց ամիս հղիությունից վոչ չուտ մեռած ծնվածները: Վեց ամիս հղիությունից չուտ մեռած ծնվածները համարվում են վիճումներ և գրանցման յենթակա չեն:

41. Յեթե յերեխան ծնվել է վեց ամիս հղիությունից հետո և ծնվելուց հետո ապրել է թեկուղ և մի քանի բոսկե, նրա ծննդյան ու մահվան փաստը գրանցվում է առանձին ծննդյան ու մահվան ակտերում սովորական կարգով:

42. ԿԱՇՄ-ում ծնված ոտար հպատակների յերեխանները գրանցվում են ըստ հանուր հիմունքներով:

43. Ծննդյան ակտի գրանցումը կատարվում է անվճար:

44. Ծննդյան գրանցումն անհիմն մերժելու և յուր ժամանակին չգրանցելու համար, այն պաշտոնատար անձինք, վորոնց վրա յերենքով դրված քաղաքացիական կացության ակտերի գրանցումը, յենթակա յեն քրեական պատասխանատվության ՌԵՖՍՀ Ք. Ռ. 111 Հոդվածով և միութենական հանրապետությունների Քրեական Որենսդրքերի համապատասխան Հոդվածներով:

ԳԼՈՒԽ 6-րդ

ՄԱՀՎԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

45. Մահվան գրանցումը պարտադիր է և կատարվում է մահվան պատճառի մասին բժշկական վկայականի հիման վրա:

Մանրություն.— Այն վայրերում ուր չկան բժշկական կտյաններ, մահվան փաստը հաստատում են յերկու վկաներ:

46. Մահվան մասին գրավոր կամ բանալոր դիմում պետք է տրվի մահացածի հարազատների կամ նրանց հետ ապրող անձանդ:

կողմից, իսկ յեթե այսպիսիները չկան, անային կառավարչության կամ հարևանի կողմից, մահվան բոլորից վոչ ուշ յերեք որդա ընթացքում:

47. Բոնի մահը (սպանություն) կամ ինքնասպանությունը ու գժրախտ պատահարից առաջացած մահը, պետք է գրանցվի քննչական որդանների կամ ԲԴ Միլիցիայի հայտարարությամբ մահանալու մոմենտից կամ դիմում գտնելուց վոչ ուշ 24 ժամվա ընթացքում, բացառապես մահվան պատճառի մասին արված բժշկական վկայականի հիման վրա: Այն դեպքերում, յերբ գրանցվում է անհայտ անձնավորության մահը՝ բժշկական տեղեկանքի հիման վրա, լրացվում են մահվան ակտի այն սյունյակները, վորոնց առթիվ տվյալներ կան բժշկական տեղեկանքի մեջ, մյուս բոլոր սյունյակները չեն լրացվում:

48. Ժամկետից ուշ հայտարարված մահվան գրանցումները կատարվում են այս հրահանդի 30-րդ հոդ. սահմանված կարգով: Ժամկետանց գրանցման մասին դիտողությունը արվում է մահվան ակտի 14-րդ սյունյակում:

49. Զինվորական ծառայության մեջ գտնվող կամ զինապարտի մահը գրանցելու դեպքում զաղսը պարտավոր է հայտնել տեղական զինհաշվառման որդանին:

50. Մահվան ակտը գրանցելուց պետք է ներկայացվի միլիցիայի տեղեկանքը մահացածի անձնագիրը հանձնելու մասին:

Ծանրություն. Տեղեկանք չներկայացնելը չի դադարեցնում մահվան ակտի գրանցումը, սակայն զաղսի աշխատակիցը հայտնում է ԲԴ միլիցիային անձնագիրը վերցնելու համար:

51. Մահվան ակտը գրանցելու ժամանակ զաղսի աշխատակիցը հայտարարողից պարզում է, թե մահացածը չի՞ սրարդելվատքվել ԽՍՀՄ շքանշանով կամ պատվավոր հեղափոխական զենքով: Հաստատվելու դեպքում զաղսի որդանը հայտնում է այդ ժամանակի, յերկրի, հանրապետության քաղաքացիական կացության ակտերի բաժնին, իսկ վերջինս՝ ԽՍՀՄ ՆԳԺԿ քաղաքացիական կացության ակտերի բաժնին. Հաղորդագրության մեջ պետք են նշել ազգանուն, անուն, հայրանուն և ինչով է յեղել պարզեվարված:

52. Դատական կամ նոտարական կարգով վորևե անձնավորության մահացած համարելու դեպքում, նոտարական վկայականի կամ դատարանի փորոշման հիման վրա նրա մահը պետք

գրանցվի մահացածի վերջին բնակավայրի զաղսի որդանում:

Մահվան ակտի 14-րդ սյունյակում (առանձին նշումներ) նշումը և դատարանի կամ նոտարական գրասենյակի անունը և դատական վորոշման կամ նոտարական վկայական տարրու ժամանակը:

53. Մահվան ակտի դրանցումը կատարվում է անվճար:

54. Մահվան ակտի դրանցումը անհիմն մէրժելու, կամ ժամանակին չգրանցելու համար, այն պաշտոնատար անձը, վորի վրա որենքով դրված է քաղաքացիական կացության ակտերի գրանցումը յենթակա յի քրեական պատասխանատվության ՌԵՖՍՀ Քրեական Որենսդրքի 111 հոդ. և այլ միութենական հանրապետությունների Քրեական Որենսդրքի համապատասխան հոդվածներով:

ԳԼՈՒԽ 7-ՐԴ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

55. Ամուսնությունը գրանցելու մասին կարող են դիմել ըստ իրենց բնակության վայրի յերկու ամուսնացողները կամ նրանցից մեկն ու մեկը գրանցոր կամ բանակոր:

56. Ամուսնության գրանցումը տեղի է ունենում միմիայն յերկու ամուսնացողների ներկայության դեպքում, պահպանելով հետեւյալ կանոնները՝

ա) Ամուսնությունը գրանցելու վոխագարձ համաձայնությունը՝

բ) Միութենական հանրապետությունների ամուսնության ընաանիքի և խնամակալության որենսդրքով սահմանված ամուսնացող գույքի ամուսնական հասակ ունենալը: (Բացառիկ դեպքում, առանձին միջնորդությամբ կանանց համար իջեցնելով այն վոչ ավելի մի տարուց, ինքնավար ԽՍՀ կենտրոնական Փորձադիր նոմիստեների, յերկրային, մարզային գործկոմների նոև շաղաքային ու շրջանային խորհուրդների վորոշումներով):

գ) Ամուսնացողները միմյանց առողջության մասին վոխագարձ տեղյակ լինելը:

դ) Անձնադրերի ներկայացնելը: Իսկ անձնագրային սիստեմ չմոցրված վայրերում՝ ծննդյան վկայական:

57. Ամուսնությունները չեն գրանցվում՝

66. Անձնագրային սիստեմ չմտցված վայրեղում ամուսնացողները ծննդյան վկայական չունենալու դեպքում զագսը ակտերի գրքի հիման վրա գրում և ծննդյան վկայական, վորի վրա և նըշվում և ամուսնության մասին:

67. Յեթե տիյալ վայրի ակտի գրքում չի գրանցված ամուսնացողների ծնունդը, զագսի բյուրոն առանց ամուսնության գրանցումը դադարեցնելու, ամուսնացողների ծննդավայրի զագսի որդանից պահանջնվում և ուղարկել ծննդյան վկայականները, նրանց վրա դիտողություններ և կատարում ամուսնության մասին և հանձնում տերերին:

68. Գրանցումը կատարող դյուզմորհրդի աշխատակիցը յեթե ամուսնացողներին չի ճանաչում և չունեն ինքնությունը հաստատող փաստաթղթեր, ամուսնությունը գրանցում և ամուսնացողների ինքնությունը հաստատող յերկու վկաների ներկայությամբ: Սակայն նման դեպքում ամուսնության վկայականների հանձնումը հետաձգվում և մինչև ամուսնացողների կողմից ծննդյան վկայական ներկայացնելը:

69. Այն անձանց նկատմամբ, վորոնց ծնունդը գրանցված չի նեղել կամ թե համապատասխան ակտերի գրքերը կորել են, ամուսնության մասին նշումը կարելի յէ կատարել դյուզմորհրդի կողմից արված ամուսնացողների ինքնությունը հաստատող տեղեկանքի վրա:

70. Զինվորական ծառայողների ամուսնության մասին դիտողությունը արվում և— հրամանատարական, պետ և քաղաքական կազմին՝ անձնական վկայականում, կարմիր բանակայիններինը՝ ծննդյան վկայականներում:

ԳԼՈՒԽ 8-րդ

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԴՐԱՆՑՈՒՄ

71. Ամուսնալուծության (ապահարզանի) մասին զագսի բյուրոյին հայտարարություն տրվում և յերկու ամուսինների կամ նրանցից մեկն ու մեկի կողմից, նրանց բնակության վայրում:

72. Ամուսնալուծության (ապահարզան) գրանցումը կատարվում և ամուսինների փոխադարձ համաձայնությամբ կամ նրանցից մեկն ու մեկի ցանկությամբ:

73. Ամուսնալուծության գրանցումը կատարվում և յերկու ամուսինների ներկայությամբ, բացառությամբ այս հրահանգի 85-90 հոգվածներում նախատեսված դեպքերից:

74. Ամուսնալուծության գրանցումը կատարվում և ամուսնալուծությունների ինքնությունը, ամուսնության կապերի մեջ գտնվելը հաստատող փաստաթղթերի (անձնագիր և ամուսնության վկայականի) հիման վրա:

75. Յեթե դիմողը չունի ամուսնության վկայական, ամուսնալուծությունը գրանցվում է, իսկ տեղեկությունները ամուսնության վայրի ու ժամանակի մասին գրանցվում և ամուսնալուծության ակտի 7-րդ սյունյակում դիմողի ասածի հիման վրա: Դիմողներն զգուշացվում են սուտ տեղեկություն տալու համար պատասխանառվության մասին:

76. Փաստական (չգրանցված) ամուսնությունների լուծվելը պազմերում կարող են գրանցվել, յեթե միայն այդ ամուսնությունը ճանաչված է դաստարանի կողմից: յեթե նա դաստարանով չի ճանաչված, զագսը չպետք է ամուսնալուծության մասին դիմումները ընդունի:

77. Ամուսնալուծությունը գրանցելու ժամանակ ամուսինները յուրաքանչյուր են տալիս թե նրանցից յուրաքանչյուրը ինչ ազգանուն է ցանկանում կրել (ամուսնական թե մինչ ամուսնական): Այս հարցի վերաբերյալ ամուսինների մեջ համաձայնություն ըլինելու գեղըռում, յուրաքանչյուրին կոչում են մինչ ամուսնական ազգանունով:

78. Ծնողների ամուսնալուծությունից հետո յերեխանները կոչվում են այն ազգանունով, ինչ ազգանունով վոր կոչվել են ծնունդը տոմարագրելու ժամանակ: Այն գեղքում, յեթե ծնողը ամուսնալուծությունից հետո իր դաստիարակությանը թողնված յերեխային ցանկանում ե կոչել իր ազգանունով, ինձամակալական և հոգաբարձական մարմինները յերեխայի շահերից յելնելով, վորոշում են հարցը, այդ վորոշման հիման վրա զագսը այդ յերեխայի ծննդյան գրանցման մեջ համապատասխան ուղղում և մտցնում:

Յեթե գրանցումը տեղի յէ ունեցել այլ զագսում, այդ մասին հայտնվում և համապատասխան զագսին, գրանցման մեջ ուղղումներ մտցնելու համար:

79. Ամուսնալուծության գրանցում կատարողը պարտավոր եղարգնել թե, բաժանվողները յերեխաններ ունեն, ծնողներից վորի

89. Յեթե դիմադի ցույց տրված հասցեյով մյուս ամուսինը կի բնակմել, ամուսնալուծությունը չի գրանցվում մինչև դիմությունը չտա մյուս ամուսնու բնակության վայրը:

90. Մյուս ամուսինը ծանուցումը ստանալուց իր բնակության վայրի զագս չներկայանալու դեպքում, յեթե կա նրա ստորագրությունը ծանուցագիրը ստանալու մասին, ամուսնալուծությունը կարելի յէ գրանցել դիմող ամուսնու ներկայությամբ, այդ առթիվ դիտողությունը մտցնելով ակտի մեջ: Զագս չներկայացած մյուս ամուսնուն ուղարկվում է ամուսալուծության մասին վկայական:

91. 87-90 հոդվածներում նախատեսնված դեպքերում մեկ ամուսնու ներկայությամբ ամուսնալուծությունը գրանցելուց ներկա չգտնված մյուս ամուսնու անձնագրի մեջ ամուսնալուծության մասին դիտողությունը կատարում է նրա բնակության վայրի զագսը, ամուսնալուծության մասին վկայականը հանձնելու ժամանակ:

Ամուսնալուծության մասին դիտողություն կատարելու համար մյուս ամուսինը զագս չներկայանալու դեպքում, այդ դիտողությունը կատարում է ԲԴ Միլիցիայի անձնագրային բաժինը զագսի որդանի հաղորդագրության հիման վրա:

92. Ամուսնալուծություն գրանցելու համար գանձվում են պետական միասնական տուրք հետևյալ չափով:

ա. Առաջին ամուսնալուծության համար— 50 ռուբլի:

բ. Յերկրորդ ամուսնալուծության համար— 150 ռուբլի:

շ. Յերրորդ և հաջորդ ամուսնալուծությունների համար— 300—ական ռուբլի:

93. Ամուսնալուծության համար վճարվելիք գումարը գանձվում է ամուսնալուծության մասին դիմող ամուսնուց: Յեթե դիմող ամուսինը գտնվում է այն ամուսնու խնամքի տակ, վորից բաժանվում է և նրա խնամքի տակ են մնում փոքրահասակ յերեխանները կամ թե նա անաշխատունակ են, ամուսնալուծության դումարը գանձվում է այն ամուսնուց, վորի խնամքի տակ են գտնվում նա:

94. Ժաղդատարանի կողմից սահմանված ամուսնալուծությունը գյուղներու պահին, զագսի որդանը ժողդատարանի վճռենչված ժամանակական ցույց ետակա վարպետ ամուսնալուծության ժամանակ: Ակտի 13-րդ սյունյակում (առանձին նշումներ)

արվում է դիտողություն առ այն, վոր ամուսնալուծությունը սահմանված է դատարանի վճռով:

95. Միակողմանի ամուսնալուծություն գրանցելու դեպքում, յեթե մյուս ամուսինը գտնվում է արտասահմանում և ԽՍՀՄ-ի քաղաքացի յէ հանդիսանում, ծանուցում այդ մասին ուղարկվում է ԽՍՀՄ ՆԳՖԿ քաղաքացիական կացության ակտերի բաժին՝ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի միջոցով մյուս ամուսնուն հանձնելու համար:

Յեթե արտասահմանում ապրող մյուս ամուսինը ոտարահպատակ է, ամուսնալուծությունը կատարվում է ԽՍՀՄ քաղաքացի հանդիսացոյ մի կողմի հայտարարությամբ, ինչ մյուս կողմը տեղյակ է դարձվում վերը հիշված կարգով ԽՍՀՄ ՆԳՖԿ քաղաքացիական կացության ակտերի բաժնի միջոցով:

ԳԼՈՒԽ 9-ՐԴ

ՎՈՐԴԵԳՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

96. Զագսը վորդեգրության գրանցումը կատարում է բացառապես ինսամակալության և հոգաբարձության մարմինների վորոշումների հիման վրա:

97. Վորդեգրությունը թույլատրվում է անչափահաս (մինչև 18 տարեկան) յերեխանների նկատմամբ և բացառապես յերեխանների շահերը նկատի ունենալով:

98. Տարին լրացրած յերեխանների վորդեգրությունը սուանց նրանց համաձայնության չի թույլատրվում:

99. Վորդեգրություն կարող են կատարել բոլոր քաղաքացիները բացառությամբ՝

ա) Ժողդատարանի կողմից ընտրական իրավունքից զրկվածները:

բ) Ժողդատարանի կողմից ծնողական իրավունքից զրկվածները:

շ) Անչափահասները:

դ) Հոգեկան հիվանդները:

ե) Այն անձերը, վորոնց շահերը ներհակ են խնամակալության և հոգաբարձության յենթակա անձանց շահերին, ինչպես նաև այն անձերը, վորոնք նրանց հետ թշնամական հարաբերություն անեն:

111. Ազգանուն և անուն փոխելու մասին դադսը պարտավոր է հայտարարել տեղական պաշտոնական թերթում և ԽՍՀՄ ու Համառուսական ԿԳԿ «Իղվեստիա»-յում։ (Համելված № 11)։

Թանորուքյուն. — № 1. Թերթում հայտարարություն ալբ-
փում և խնդրատուի հաշվին։

Մանորուքյուն. — № 2. Հայտարարության համար արված
դումաբը յենթակա չի վերադարձնելու, յեթե անդամ
աղդանուն կամ անուն փոխելը մերժվի։

112. Ազգանունը կամ անունը փոխելու հարցը պետք է լուծ-
վի հայտարարությունները թերթերում հրապարակվելուց հե-
տո, վոչ ավելի 3 ամսվա ժամկետում։

113. Ազգանունը կամ անունը փոխելը մերժելու դեպքում,
դադսը խնդրատուին ուղարկում և մերժման մասին ծանուցում։

114. Ազգանունը կամ անունը փոխելու մասին ակտի դրան-
շումը կատարվում և միայն խնդրատուի ներկայությամբ։

115. Ազգանունը կամ անունը փոխելու դեպքում, ծննդյան
ակտի դրանցման մեջ համապատասխան ուղղումներ և կատար-
վում։ Յեթե ծննդյան գրանցումները պահպանման մի այլ վայ-
րում, գրքերում ուղղումներ կատարելու համար դադսը հաղոր-
դում և համապատասխան դադսին։

116. Զինվորական ծառայողների, զինակոչեկների և զինա-
պարտների ազգանունը կամ անունը փոխելու դեպքում դադսը
այդ մասին հայտնում և համապատասխան զինհաշվառման մար-
միններին։

117. Ազգանուն կամ անուն փոխելու մասին դադսերը տալիս
միայնական։

118. ԽՍՀՄ տերիտորիայում ապրող ոտարահպատակները
աղդանուն կամ անուն փոխելու իրավունքով չեն ոգտվում։

Մանորուքյուն. — Այս հրահանգի կիրառկությամբ վե-
րացվում է արտասահմանյան պետությունների վորո-
շումներով ոտարահպատակների վերաբերյալ դադսի
գրանցման գրքերում ազգանուն կամ անուն փոխելու
մասին դիտողություն անելու կարգը։

ԳԼՈՒԽ 11-ՐԴ

ՀԱՅՅՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՍՐԾՅԱՎԱՐ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

119. Հայրությունը սահմանելու առթիվ մայրը կարող է
դրավոր դիմում տալ իր բնակության վայրում համապատաս-
խան դադսին։

ա) Հղիության ժամանակամիջոցում։

բ) Յերեխայի ծնունդը գրանցելու մոմենտին և

գ) Յերեխայի ծնունդը գրանցելուց հետո ցանկացած ժամա-
նակը։

120. Հայրությանը սահմանելու առթիվ դիմում տալու ժա-
մանակ դիմում ընդունողը պարտավոր է մորից պահանջել ներ-
կայացնելու անձնագիրը, իսկ Հղիության ժամանակամիջոցում՝
դիմելու դեպքում դրանից բացի նաև բժշկի տեղեկանքը Հղիու-
թյան մասին։

Մանորուքյուն. — Գյուղական վայրերում յերբ մոր ինքնու-
թյունը գյուղխորհրդին հայտնի է, ինքնությունը հաս-
տառող փաստաթղթեր ներկայացնելը չի պահանջվում։

121. Դիմումի մեջ հիշատակված հայր ճանաչելու անձին՝
ստացված դիմումի մասին նույն որը ուղարկվում է ծանուցում։

122. Հայր ճանաչված անձնալորությունից մի ամսվա ըն-
թացքում առարկություն ստանալու դեպքում, դադսը պարտա-
վոր է յերկրորդ անդամ տեղեկացնել քաղաքացուն, վոր նա
գրանցվում է յերեխայի հայր և, վոր նրան իրավունք է վերա-
պահվում մի տարիա ժամկետում առարկել հայրության դեմ՝
դատական կարգով։

123. Հայրության մասին դիմումը գրանցելուց, հանձնվում
է խնդրատուհուն գրանցված դիմումի յերկրորդ որինակը (Հա-
վելված № 12)։

ԳԼՈՒԽ 12-ՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍ ՎՃԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱԶՄԱԶԱՎԱԿԱԿ
ՄԱՅՅՐԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՁԵՎԱԿԵՐՊՈՒԽՄԸ

124. Պետական նպաստ վճարելու համար դիմումները ընդուն-
վում են միայն այն մայրերից, վորոնք ունեն կենդանի վոչ պա-
տասխանականություն անելու կարգը։

Հաս յոթ իրենցից ծնված յերեխաներ: Վերջին յերեխան պետք է հինգ տարեկանից փոքր լինի: Յերեխաների ծագումը տարբեր հայրերից նշանակություն չունի:

125. Պետական նպաստ վճարելու համար դիմումներ չեն ընդունվում՝

ա) Յեթե յոթ յերեխաների կազմի մեջ կան ոտարահպատակ յերեխաներ:

բ) Յեթե ընտանիքի յոթ յերեխաների կազմի մեջ կան վորդեգրված կամ խորթ յերեխաներ:

126. Պետական նպաստ վճարելու մասին գրավոր դիմում տալիս ե մայրն անձամբ կամ փոստի միջոցով, իր բնակության վայրի քաղաքային կամ շրջանային զագսի բյուրոյին: Դիմումի մեջ ցույց են տրվում հետևյալ տեղեկությունները՝

ա) Բազմազավակ մոր ազգանուն, անուն, հայրանունը:

բ) Ծննդյան վայրի անունը, տարիքը և ծիշտ հասցեն:

գ) Կենդանի յերեխաների ազգանուն, անուն, հայրանունները:

դ) Նրանց ծննդավայրի անունը, ծննդյան տարեթիվ, ամիս և ամսաթիվ:

ե) Մորից առանձին ապրող յերեխաների հասցեն:

զ) Դիմում տալու ժամանակը (տարեթիվ, ամիս, ամսաթիվ) (Հավելված № 14):

127. Բազմազավակության համար պետական նպաստ վճարելու մասին դիմումին պետք է կցվեն հետևյալ փաստաթղթերը.

ա) Դիմումի մեջ հիշատակված բոլոր յերեխաների առաջին անդամ կամ կրկնակի ստացված ծննդյան վկայականները: Այդ վկայականներում պետք է գրված լինի ծնողների ազգանուն, անուն, հայրանունները: Ծննդյան վկայականների փոխարեն կարող են ներկայացնել նրանց պատճենները վավերացված նոտարական կամ նրանց փոխարինող մարմինների կողմից:

բ) Գյուղական վայրերում բնակվողները՝ տվյալ մորը պատկանող նրա հետ ապրող կենդանի յերեխաները հաստատող գյուղական խորհրդի նիստի արձանագրությունը, վորում պետք է ցույց տրվի այդ յերեխաների տարիքը (Հավելված № 15):

գ) Քաղաքային վայրերում բնակվողները՝ միլիցիայի մարմինների տեղեկանքը նրանց հետ ապրող կենդանի յերեխաների ու նրանց տարիքի մասին (Հավելված № 15 ա.):

դ) Մորից առանձին ապրող յերեխաների մասին, յերեխա-

ների բնակության վայրի միլիցիայի մարմինների տեղեկանքը առ այն, վոր նրանք կենդանի յեն և բնակվում են այս ինչ վայրում (Հավելված № 16):

ե) Կարմիր բանակում գտնվող յերեխաների մասին համապատասխան զորամասի տեղեկանքը:

Ծանոթություն. — Մորից առանձին ապրող կամ բժիշկ շարքերում գտնվող յերեխաների մասին տեղեկանքը, յեթե նա տրված ե դիմում տալուց յերեք ամիս առաջ, ուժի մեջ չի:

128. Զագսի որդանները բազմազավակության համար պետական նպաստ ստանալու գործով, ծննդյան գրանցումների վերականգնում չեն կատարում, և գրանցումների վերականգնման հիման վրա տրված վկայականները չեն ընդունում: Ծննդյան վկայականները կամ նրանց պատճենները ներկայացնելը անհնարինելու գեալքում (յերեխաները չեն գրանցված կամ գրանցումները կորսված են) յերեխաները տվյալ մորից ծնված լինելու փաստը պետք ե վճռվի դատարանով, և նպաստ վճարելու մասին դիմումին պետք ե կցվի դատարանի վճիռը:

129. Յեթե յերեխաների ծննդյան վկայականներում մայրը ցույց է տրված տարբեր ազգանունով և անդամ նույն ազգանունով, բայց այլ ազգանուն քան նշված ե նրա ներկայացրած փաստաթղթերում, դիմումին պետք է կցված լինեն ամուսնության, ամուսնալության կամ ազգանուն-անուն փոխելու վկայական, կամ դատական ու նոտարական փաստաթղթեր, վորոնք կհաստատեն ազգանվան փոփոխության փաստը:

130. Զագսի բյուրոյի աշխատակիցը նպաստի վերաբերյալ դիմումը ընդունելով ստուգում է թե, համապատասխանում են արդյո՞ք դիմումի բովանդակությունը և կցված փաստաթղթերը սույն հրահանգի 126 և 127 հոդ. հոդ. նշված պահանջներին: Բացի այդ խնդրատուին հարցումիրած անելու միջոցով, պարզվում է դիմումի մեջ ցույց տրված տեղեկությունների ճշտությունը:

131. Պնտական նպաստի վերաբերյալ այն դիմումները, վորոնցում ցույց չեն տրված պահանջվող լրիվ տեղեկությունները, կամ վորոնց կցված չեն բոլոր պահանջվող փաստաթղթերը, չեն ընդունվում մինչև անհրաժեշտ ուղղումներ մտցնել կամ պակաս փաստաթղթերի կցելը:

132. Բազմազավակ մոր դիմումի մեջ չեշտված տեղեկու-

թյունների ճշտությունը վոչ մի կասկած չառաջացնելու դեպքում, զագսի բյուրոյի աշխատակիցը կազմում է յեղրակացություն այն մասին, վոր պետ նպաստի առթիվ դիմումը ստուգված է, վոչ մի կասկած չի առաջացնում (Համելված № 17) և գործը ներկայացնում է շըջործկոմ կամ քաղաքորհուրդ քննության: Ուղարկվող դործը համարակալվում է այն №-ով՝ ինչ համարով վոր նպաստի առթիվ դիմումը գրանցված է հաշվառման գրքում (տես հոդ. 136) (Համելված № 13):

133. Դիմումի մեջ նշված տեղեկությունների ճշտությունը զագսի աշխատակիցի մեջ վորեւ կասկածանք առաջացնելու դեպքում նա պարտավոր է, դիմումի ստուգումը կատարել հետեւյալ կերպ:

ա) Քաղաքներում զագսի բյուրոյի աշխատակիցը ստուգում է կատարում մոր բնակության վայրում, տնային գիրքը ստուգելու, տնային կառավարչության աշխատակիցներին կամ հարեւաններին հարց ու փորձ անելու միջոցով: Ստուգման արդյունքների առթիվ կազմվում է ակտ, վորը ստորագրում են զագսի բյուրոյի աշխատակիցը, տնային կառավարչության ներկայացուցիչը, հարցուփորձի յենթարկված անձիք և բազմազակ մայրը:

բ) Գյուղական վայրում ստուգումը կատարում է շըջանային հրահանգիչը մոր բնակության վայրում, հարեւաններին, յերեխաններին հարցուփորձ անելու, ծխամատյանը և զագսի գրքերը ստուգելու միջոցով: Ստուգման արդյունքների մասին կազմում է ակտ, վորը ստորագրում են՝ շըջանային հրահանգիչը, գյուղխորհրդի ներկայացուցիչը, հարցաքննված անձինք և բազմազավակ մայրը: Ստուգման և վերհիշված անձանց հարց ու փորձ անելու միջոցով բազմազավակ մոր պետ նպաստի իրավունքը չպարզելու գենքում, (հարեվանների տեղեկությունների հակասությունները և այլն) հրահանգիչը հարցը փոխադրում է գյուղխորհրդի քննության: Ստուգման ակտը և գյուղխորհրդի նիստի արձանագրությունը վավերացված գյուղխորհրդի նախադասի և քարտուղարի ստորագրություններով և կնքով կցվում են զագսում դտնվող բազմազավակ մոր գործին (Համելված № 18):

134. Պետական նպաստ ստանալու անորինական փորձայտաբերելու գեպքում, կազմվում է այդ առթիվ արձանա-

թրություն և նյութը հանձնվում է միլիցիայի մարմիններին մեղավորներին պատասխանավության յենթարկելու:

135. Կասկածելի հիմնական դեպքերը, վորոնց հայտնաբերման դեպքում ուղարտադիր կարգով դիմումները պետք ե ստուգվեն մոր բնակության վայրում (Հրահանգի 133-րդ հոդ.) հանգստանում են՝

ա) Դիմումին կցված փաստաթղթերում հայտնաբերված ուղղումները և ջնջումները:

բ) Նախագահի և քարտուղարի ստորագրությունների կամ կնքի բացակայությունը:

գ) Ծննդյան վկայականների մեջ մոր և յերեխանների ազգանունները պարզ գրված չլինելը:

դ) Մոր և յերեխանների մասին տեղեկությունների հակասությունները դիմումի և փաստաթղթերի մեջ:

ե) Դիմումին կցված փաստաթղթերի իսկական լինելու կամ կածելիությունը:

զ) Դիմումի և ներկայացված փաստաթղթերի ու մորը բանակոր հարցման միջոցով տված տեղեկությունների հակասությունը:

ը) Յեթե բազմազավակ մայրը յոթ յերեխա ունեցող մայրինելու համար չափազանց ջահել է, կամ ընդհակառակը նորածինի մայր լինելու համար նա թվում է չափազանց ծեր:

թ) Վորեւ մեկից դիմում ստացվելու առ. այն, վոր մոր հայտնած տեղեկությունները իր ընտանիքի մասին իրականությանը չեն համապատասխանում:

136. Բազմազավակ մոր և նրա յերեխանների վերաբերյալ տեղեկությունները գրվում են հաշվառման գրքում հերթական համարի տակ առանձին թերթի վրա:

Հաշվառման գրքից բացի տարգում ե այլուրենական գիրք, վորի մեջ գրվում է բազմազավակ մոր ազգանունը, անունը, հայրանունը և այն №-ը, վորի տակ գրքում գրանցված են նրա վերաբերյալ հաշվառման տվյալները:

137. Բազմազավակ մայրերից ստացված դիմումների ու նրանց ընթացքի հաշվառման գրքում գրանցվում են հետեւյալ տեղեկությունները.

ա) Մոր անուն, հայրանուն, ազգանունը, ծննդյան տարեթիվը և բնակության վայրը:

բ) Բոլոր յերեխաների ազգանուն, անուն, հայրանունները, ծննդյան ճիշտ ժամանակը և մորից առանձին ապրող յերեխաների հասցեները:

գ) Դիմումը ընդունելու ժամանակը զագսի բյուրոյում:

դ) Զեվակերպման ընթացքում հաշվառման դրքում՝ դրանցվում ե՝ մոր բնակության վայրում կատարված ստուգման ակտը կազմելու ժամանակը, դործը շրջդործկոմ կամ քաղխորհուրդի ուղարկելու ժամանակը, յերբ և ինչքան դումար և վճարված վորապես առաջին նվազի նպաստ, յերբ ե տրված տեղեկանքը հերթական նպաստ ստանալու համար, նպաստի վճարումը դադարեցնելու ժամանակը և դադարեցնելու պատճառը (Հայել-ված № 19):

138. Շրջդործկոմում կամ քաղխորհուրդում նպաստ վճարելու դործը քննելու ժամանակ զեկուցողը հանդիսանում ե զագսի բյուրոյի վարչը, կամ շրջանային հրահանդիչը, իսկ նրանց բացակայության դեպքում՝ ՆԳԺԿ քաղաքային կամ շրջանային բաժանմունքի պետը:

139. Նպաստի վերաբերյալ դործերը շրջդործկոմում կամ քաղխորհուրդում քննվելուց հետո ուղարկվում են ՆԳԺԿ քաղաքական կացության ակտերի բաժին, ժողկոմիորհին կամ Ցերկուրային գործկոմին զեկուցելու համար:

140. Նպաստի վերաբերյալ բոլոր գործերը մարդային, յերկրային գործկոմում կամ ժողկոմիորհում քննելուց հետո վերադպում են քաղաքային կամ շրջանային զագսի բյուրոյին, վորտեղ նրանք պահպում են հատուկ պահարաններում այբուբենական կարգով:

